Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոսի

ԼԻԼԻԹ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲԱՅԱՆԻ «Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման և ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացվում է ԺԸ. 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիլիթ Բաբայանի ներկայացրած ատենախոսության արդիականությունը կայանում է նրանում, որ տարածական պլանավորման կառուցվածքում կլաստերային մոտեցումը ներկայացվում է որպես առանձին քաղաքաշինական ցանցային տարածության ձևավորում, որը որոշակիորեն ինքնաբավ ու ինքնավար է և հնարավորություն ունի բնակչությանն ապահովել բոլոր անհրաժեշտ գործառույթներով (բնակություն, աշխատանք, հանգիստ և այլն): Տարածական պլանավորման մեջ կլաստերային-ցանցային մոտեցումը կառավարման նոր տեխնոլոգիա է, քանի որն իր մեջ ներառում է համայնքների հեռանկարային զարգացման երեք հիմանական թիրախները՝ կայունություն, համաչափ զարգացում և հավասարակշռություն:

Կլաստերային տարածական պլանավորման մոդելի հիմքում ընկած է ներկլաստերային բաղադրիչների միջև արդյունավետ գործառնական-հատակագծային կապերի ստեղծումը և դրանց միջև ռեսուրսների համաչափ տարաբաշխումը: Որպես համայնքների կառավարման գործիքակազմ այն բնակավայրերի և տարածքների զարգացման խթանող համակարգ է՝ ներկլաստերային կապերի զարգացման շրջանակում գործընթացին դինամիկա և մրցակցային փոխարդյունավետություն հաղորդող: Մոդելի հաջող կիրարկման արդյունքում հետընթաց ապրող բնակավայրերում կարող է գրանցվել աստիճանական անցում դեպի ավելի բարենպաստ մակարդակ:

Հայեցակարգային մշտադիտարկումները, բարելավումներն ու լրացումները տարածական պլանավորման մակարդակում հնարավորություններ են ընձեռել դիտարկելու մոդելի բազմաոլորտ հարմարեցումները: Համագործակցող, փոխկապակցված բաղադրիչներով կլաստերային մոտեցման նոր հնարավորություններն ու առավելությունները ներկայացվում են որպես համայնքների մրցակցային ակտիվությունն ապահովող և արդյունքում տնտեսական աճ գրանցող գործիքակազմ:

Ատենախոսության մեջ քննարկվող կլաստերային մոդելի և բաղադրիչ տարրերի ներդրման հիմնական առավելությունների համալիր վերլուծությունը հիմնավորում է տարածական պլանավորման գործընթացում մոդելի տեղայնացման անհրաժեշտությունը:

Որպես քաղաքաշինական ակտիվ զարգացող մոդել, հստակ ընդգծված է կլաստերացանցային համակարգի հնարավոր դերի և նշանակության հարցը տնտեսության կայուն զարգացման գործում: Կայուն զարգացման մոդելի համատեքստում կլաստերը դիտարկվում է որպես քաղաքային համակարգի կետային, գծային և տարածական բաղադրիչների համադրման և փոխգործակցության գործիք: Այս տեսանկյունից նույնպես առաջադրված թեման արդիական է և միտված է լուծելու ոլորտում առկա կիրառական կարևոր խնդիրներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԴՐԱՆՑ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Որպես հետազոտության նպատակ առաջադրվել է ՀՀ Սյունիքի մարզի համայնքների համակցված կլաստերային պլանավորման ծրագրերի ուսումնասիրության հիման վրա մոտեցումների մշակումը, համայնքների զարգացման տարածքային անհամաչափությունների մեղմմանն ուղղված միջոցառումների և համապատասխան լուծումների առաջարկների ներկայացումը՝ տարածքների հատակագծային կառուցվածքի կատարելագործման և կայուն զարգացման համար:

Առաջադրված նպատակին հասնելու համար իրականացվել են հետևյալ խնդիրները.

- համակցված կլաստերային մոտեցմամբ համայնքների զարգացման համաշխարհային և հայրենական փորձի ուսումնասիրություն,
- ուսումնասիրության արդյունքների ընդհանրացում և դասակարգում՝ հարմարեցնելով վերջիններիս կիրառությունը ՀՀ բնակավայրերի ձևավորված համակարգին,
- համայնքների (քաղաքային և գյուղական բնակավայրերի) տարածական-հատակագծային կառուցվածքի արժևորման և զարգացման մեթոդաբանության մշակում՝ հիմնվելով կլաստերային սկզբունքների վրա,
- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացման և էկոլոգիական վերակառուցման ուղիների առաջադրում՝ օրենսդրության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան ճարտարապետական գործունեության իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծումով և տարածական կազմակերպման «խելացի» կառավարման գործընթացների

վերագրմամբ,

• համայնքների (բնակավայրերի) զարգացման հնարավոր ուղղությունների վերլուծության հիման վրա կլաստերային մոտեցման տարածական-հատակագծային կառուցվածքի արդյունավետ վերակազմավորման մոդելի առաջադրում,

• գիտականորեն հիմնավորված հանձնարարականների մշակում՝ Սյունիքի մարզի համայնքներում կլաստերային վերակառուցման հենքի վրա կայուն զարգացում ապահովելու և դրանից բխող տարածական-հատակագծային խնդիրները լուծելու համար:

Ատենախոսությունում ներկայացված գիտական դրույթները, եզրակացությունները պարզաբանված են բավարար աստիճանով, քանի որ դրանք հիմնավորված են միջազգային և հայաստանյան գոյություն ունեցող հետազոտությունների արդյունքների ընդհանրացման, մանրամասն վերլուծության, ապա հեղինակի կողմից տեսական ու գործնական արդյունքների մշակման մեկնաբանության և գնահատման հիման վրա:

Որպես ՀՀ քաղաքաշինության ոլորտում ներդրվող նոր մեթոդ, մոդելը փաստացի իր հիմքում կրում է երկրում արդեն իսկ մշակված և գործարկված տարածական պլանավորման հայեցակարգերի մի շարք հիմնադրույթներ:

Հատուկ պետք է ընդգծել հեղինակի կողմից կատարված վերլուծությունները ՀՀ մարզերի, համայնքների և առանձին տարածքների ռեսուրսների ուսումնասիրմանն ու դրանց հիմքում համաչափ և կայուն զարգացմանն համար մշակված քաղաքաշինական հայեցակարգերի ու իրականացված նախագծերի վերաբերյալ՝ մասնավորապես տարաբնակեցման գլխավոր հատակագիծ, համայնքների խոշորացման ծրագիր, միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ծրագիր:

Նշված վերլուծությունների հիմքում դնելով արդեն իսկ մշակված հայեցակարգերի գործարկումների մշտադիտարկումներն ու արդյունքների ամփոփումը՝ հեղինակը ներկայացրել է եզրահանգումներ ՀՀ-ում՝ մասնավորապես Սյունքի մարզի համայքներում, կլաստերային մոդելի տեղայնացմամբ առավել արդյունավետ արդյունքներ գրանցելու համար:

Սյունիքի տարածաշրջանի բնակավայրերի առկա խնդիրների դուրս բերումը, համալիր վերլուծությունը կլաստերային մոդելի գործարկման շրջանակում կարևորվել է տարածաշրջանի քաղաքաշինական բոլոր միավորների համաչափ և փոխկապակցված զարգացումն ապահովելու համար:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ներկայացված աշխատանքում ստացված գիտական նորույթներն են ՀՀ Սյունիքի մարզի բնակավայրերի համար առաջին անգամ կատարված.

• տարածքների տարածական-հատակագծային ձևավորված կառուցվածքի

եզրակացություններ, 115 անուն օգտագործված գրականության ցանկ, ինչպես նաև 18 էջ հավելվածներ:

Հետազոտության ներկայացված արդյունքները լայն կիրառություն կունենան ՀՀ տարածքների համակարգային պլանավորման նախագծերի մշակման գործընթացներում:

Բարձր գնահատելով ատենախոսության հիմնական դրույթները, ստացված գիտական և գործնական նորույթները, հարկ եմ համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Հստակեցնել տեքստում հաճախ օգտագործված որոշ տերմինների (ճարտարապետաքաղաքաշինական, ճարտարապետատարածական, ճարտարապետահատակագծային) իմաստային համապատասխանությունը:

2. Նկատի ունենալ, որ «խոշորագույն քաղաքներ» են համարվում 500 հազարից ավել բնակչություն ունեցող քաղաքները:

3. Ցանկալի կլիներ կատարված հետազոտության հենքի վրա տրվեին հանձնարարականներ այլ մարզերի բնակավայրերի համարկիրառման ուղղությամբ՝ ելնելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկություններից:

4. Հետագա աշխատանքի համար ցանկալի կլիներ առավել ընդգծել մարզի կենտրոնաձիգ բնակավայրերի զարգացման հնարավորություններն ըստ իրենց առանձնահատկությունների:

Բերված առաջարկությունները բոլորովին չեն արժեզրկում ատենախոսության գիտական և գործնական արդյունքները, քանի որ դրանք մեկնաբանված են անհրաժեշտ մակարդակով, ունեն գիտական հիմնավորումներ, տեսական հետաքրքրություններ և գործնական կիրառության նախադրյալներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են 13 գիտական աշխատանքներում՝ հրատարակված հայաստանյան և միջազգային պարբերականներում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում և բացահայտում են հետազոտվող թեմայի հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունում ստացված գիտական հիմնավորված լուծումները հետագայում կարող են կիրառվել ՀՀ մյուս մարզերի համայնքների համաչափ և կայուն զարգացման հայեցակարգերի, համայնքների գլխավոր հատակագծերի, ինչպես նաև այլ հիմնադրույթային փաստաթղթերի մշակման գործընթացում:

Ատենախոսությունում կատարված հետազոտությունները և ստացված գիտական արդյունքները վկայում են, որ Լ. Բաբայանը ձևավորված գիտական հետազոտող է, ով կարող է ինքնուրույն վերլուծել, գիտականորեն հիմնավորել և առաջադրել բնագավառի լուծում պահանջող խնդիրներ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, գտնում եմ, որ **Լիլիթ Սամվելի Բաբայանի** նեկայացրած **«Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման և ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն,
ճարտ. թեկնածու, պրոֆեսոր **Սիրեկան Օհանյան**

Պրոֆեսոր Ս. Օհանյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
ՃՇՀԱՀ-ի գիտ. քարտուղար, տեխ. գիտ. թեկ. դոցենտ **Լ.Հ.Լևոնյան**

15.12.2022.